ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՆԵԿՏԻԿՈՒՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԻՋԵՎ

Համագործակցություն և գործընկերություն հաստատելու նկատառմամբ Հարավային Կոնեկտիկուտի Պետական համալսարանը և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը համաձայնության են գալիս միմյանց միջև կրթական և ակադեմիական փոխանակումների ծրագրեր մշակել և իրագործել դրանք:

Երկու հաստատությունները ջանք չեն խնայի ի նպաստ վերջիններիս դասախոսների ու տարբեր բաժինների միջև իրենց հնարավորությունների սահմանում և ըստ սույն համաձայնագրի նախատեսումների անմիջական կապերի հաստատման ու համատեղ հետազոտությունների կատարման և կփորձեն համագործակցել երկու կողմերին հետաքրքրող բնագավառներում:

Համալսարանները փոխհամաձայնության են գալիս համագործակցության հետևյալ ընդհանուր ձևերի շուրջ.

1. համատեղ Հետազոտական աշխատանքներ

2. ուսումնական նյութերի և ուսումնական հրատարակությունների փոխանակում

3. դասախոսների փոխանակում հետազոտությունների, դասախոսությունների և քննարկումների համար

4. ավարտական կուրսի ուսանողների փոխանակում՝ ուսումնասիրության և հետազոտության համար:

Երկու համալսարաններն էլ հասկանում են, որ բոլոր ֆինանսական նախատեսումների շուրջ պետք է փոխադարձ համաձայնություն ձեռք բերվի և դրանք պետք է կախված լինեն միջոցների առկայությունից: Ակնկալվում է, որ արտաքին ֆինանսավորում պետք է հայթայել, քանի որ

այս հաստատություններից ոչ մեկը չի տիրապետում այն միջոցներին, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի իրագործման համար:

Կողմերը համաձայն են, որ սույն Համաձայնագրի իրականացումը մեկնարկվի դրա ստորագրման ամսաթվով և գործի դրան հաջորդող հինգ (5) տարի ժամկետով, որը ժամանակ առ ժամանակ վերանայման կամ փոփոխման է ենթակա կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն Համաձայնագրի թարմացումը կարող է քննարկվել երկու համալսարանների ներկայացուցիչների կողմից համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ:

Դր. Մերի Ա. Փափազյանի կողմից (ստորագրություն) Հարավային Կոնեկտիկուտի Պետական համալսարանի Նախագահ Ամսաթիվ՝ 2013թվ-ի փետրվարի 05-ին Հարավային Կոնեկտիկուտի Պետական համալսարան Քրեսենթ փողոց 501 Նյու Հեվըն, Կոնեկտիկուտ 06515	Դր. Ռուբեն Միրզախանյանի կողմից Ռեկտոր Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարան Ամսաթիվ՝ Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարան 0010, Հայաստան, Երևան, Խանջյան փողոց 13ա

Թարգմանիչ՝ Լիանա Մացոյան

15.03.2013